Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«2006 թվականի նոյեմբերի 24-ի «ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման և մասնագիտական հմտությունների պահանջների ներդաշնակեցման մասին» Համաձայնագիրը կարգավորում է միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման և մասնագիտական հմտությունների պահանջների ներդաշնակեցումը, ինչպես նաև միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման բնագավառում միասնական ծրագրերի մշակումը:

Սույն Համաձայնագրով սահմանվում են միջազգային ավտոմոբիլային փոխադրողի մասնագիտական հմտությունները, որոնց վերաբերյալ տրվում է սահմանված նմուշի հավաստագիր՝ միասնական ծրագրերով ուսուցման, ատեստավորման և որակավորման քննություն հանձնելուց հետո:

Համաձայնագրի դրույթների համապատասխան ԱՊՀ տնտեսական խորհրդի կողմից հաստատված լրացուցիչ ուսուցման և միջազգային ավտոմոբիլային փոխադրողների հմտությունների միասնական պահանջների հիման վրա միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման ոլորտում պետք է մշակվեն միասնական ծրագրեր: Կողմերն ընդունում և փոխադարձաբար ճանաչում են իրենց իրավասու մարմինների կողմից տրված հավաստագրերը: Միջազգային ավտոմոբիլային փոխադրողի մասնագիտական հմտությունները հաստատող հավաստագրի ձևաթղթերը տպագրվում են ռուսերեն լեզվով, ինչպես նաև կարող են

կրկնօրինակվել յուրաքանչյուր կողմի պետական լեզվով՝ պահպանելով ձևաչափը և դրա կետերի տեղերը: Հավաստագրերը պատրաստվում են տպագրական մեթոդով և ունեն պաշտպանվածության համակարգ:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի (ՏՆԵԿ) անդամ պետություն և ՏՆԵԿ-ի շրջանակներում նախատեսվում է ներդնել որակի խարտիան, ուստի «2006 թվականի նոյեմբերի 24-ի ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման և մասնագիտական հմտությունների պահանջների ներդաշնակեցման մասին» Համաձայնագրի դրույթների կիրառումը խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնաց միջազգային պարտավորությունների կատարման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «2006 թվականի նոյեմբերի 24-ի ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման և մասնագիտական հմտությունների պահանջների ներդաշնակեցման մասին» Համաձայնագրի հաստատումը գտնում ենք նպատակահարմար:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար /Հ. ԱՐՇԱԿՅԱՆ